

2463

Թիւ 24247
Փետր. 12, 1974

Արժանաշնորհ

Տ. Առնակ Քնյայ. Գաւազարեան
Հովհան Ս. Թովմաս Հայց. Եկեղեցւոյ
Նախազահ ծխական Խորհուրդի
Թէնէֆլայ.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք Փետր. 4, 1974 թուակիր Զեր աեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Զեր նախազահութեամբ Փետր. Ցին գումարուած հա-
մայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Զեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմա-
կան Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Կը ներփակենք Առաջնորդարանի տպագրեալ աեղեկագիրները, հաճե-
ցէք փութով ամբողջացնել զանոնք եւ Առաջնորդարան դրկել ծխական Խոր-
հուրդի նորընտիր Դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ ենթակայ մարմիննե-
րու վարչութեանց առենապետներու անունին, հասցէին եւ հեռաձայնի
թիւին հետ:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Զեզի եւ
Զեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի
մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն հա-
մայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Նուազար Գազարեան
Արա Մարթին
Գէորգ Մէքնեան
Փոլ Վարպետեան
Ալպերթ Վիքթորիա